ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրում մոդուլային տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 05.05.2026թ-ին կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 գնման պայմանագրում 2026 թվականի հունիսի 11-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը
Փոփոխության նկարագրություն	N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցների հատկացում
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.16 կետեր

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

05.05.2026թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 գնման պայմանագրի

ք. Երևան «11» «06» 2026թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ-ն (Գործընկեր-1), ի դեմս տնօրեն Գ. Պիլիյանի, «ԱՐԱՄԵ» ՍՊԸ-ն (Գործընկեր-2), ի դեմս տնօրեն Ա.Սարգսյանի և «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 7» ՍՊԸ-ն (Գործընկեր-3), ի դեմս տնօրեն Ա. Սաֆարյանի (այսուհետ երեքը միասին՝ Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 22.10.2025թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից, (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 25.12.2025թ. N 1910-Ն որոշումը և ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային աշխատանքների կատարման համար Կողմերի միջև 05.05.2026թ. կնքված ՀՀԲԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.16 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1.Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը լրացնել նոր հավելված N 3-ով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական գանձարան
Հ/Հ 900011047249
ՀՎՀՀ 02585827
Գլխավոր քարտուղար
Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Գործընկեր 1
«ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Ծարավ Աղբյուր շ. 55/5
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570029775597700
ՀՎՀՀ 01064383
Տնօրեն՝
Գ. Պիլիյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր 2
«ԱՐԱՄԵ» ՍՊԸ
ք. Երևան, Ադոնց 6/169
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570021283362800
ՀՎՀՀ 08270782
Տնօրեն՝
Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր 3
«ՎԵՐԱԾՆՈՒՆԴ-7» ՍՊԸ
ք. Երևան, Ծարավ Աղբյուր շ. 55/3
«Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ 2470094761410000
ՀՎՀՀ 01064668
Տնօրեն՝
Ա. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված
05.05.2026թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 գնման պայմանագրի
11.06.2026թ. կնքված N 1 համաձայնագրի
<<<Հավելված N 3
05.05.2026թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45221142/540	ՀՀ Արմավիրի մարզի Մեծամոր համայնքի Գետաշեն բնակավայրում «Մոդուլային» տիպի 144 տեղ հզորությամբ մսուր-մանկապարտեզի կառուցման մնացորդային աշխատանքներ	-	-	-	-	34 842 000	34 842 000	119 591 900	119 591 900	119 591 900	400 000 000	400 000 000	400 000 000	400 000 000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են առողական կարգով:»:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011047249
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝
_____ Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
Գործընկեր 1
«ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ
ք. Երևան, Ծարավ Աղբյուր շ. 55/5
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570029775597700
ՀՎՀՀ 01064383
Տնօրեն
_____ Գ. Գրիգորյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր 2
«ԱՐԱՄԵ» ՍՊԸ
ք. Երևան, Արտոյց 6/169
«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ
Հ/Հ 1570021283362800
ՀՎՀՀ 08270782
Տնօրեն
_____ Ա. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Գործընկեր 3
«ՎԵՐԱՇԵՆՈՒՆԴ-7» ՍՊԸ
ք. Երևան, Ծարավ Աղբյուր շ. 55/3
«Արդշինբանկ» ԲԲԸ
Հ/Հ 2470094761410000
ՀՎՀՀ 01064668
Տնօրեն՝
_____ Ա. Սաֆարյան
(ստորագրություն)
Կ.Տ.

09.06.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.18658.26

Բենեֆիցիար՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No O.AB.100.12CIB.PIED.0.18658.26
(ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ, «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 7» ՍՊԸ և «ԱՐԱՄԵ» ՍՊԸ ՀԳ-ի (այսուհետ՝ Դրինցիպալ) միջև 05.05.2026թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող՝ Դրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 93,044,750.00 (իննսուներեք միլիոն քառասունչորս հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի թիվ 900008000664 գանձապետական հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման օրվանից մինչև Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսված վերջնաժամկետին, և ևս 365 օրվան հաջորդող իննսուներորդ աշխատանքային օրը ներառյալ, բայց ամեն դեպքում Երաշխիքը կարող է գործել ոչ ավելի երկար, քան մինչև 30 հունիսի 2028թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender4@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակված ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու և/կամ բավարարելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման և/կամ բավարարման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝

Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

AMERIABANK

09.06.2026թ.
O.AB.100.12CIB.PIED.0.18659.26

Բենեֆիցիար՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԵՐԱՇԽԻՔ No. O.AB.100.12CIB.PIED.0.18659.26
(ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ, «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 7» ՍՊԸ և «ԱՐԱՄԵ» ՍՊԸ ՀԳ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 05.05.2026թ. կնքված թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) նախատեսված կանխավճարի տրամադրման շրջանակում Պայմանագրով նախատեսված Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին վճարել 62,000,000.00 (վաթսուներկու միլիոն) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջն ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի՝ Պահանջում նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի՝ Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքն ուժի մեջ է մտնում Բենեֆիցիարի կողմից Պրինցիպալի՝ Երաշխիք տվող անձի մոտ բացված թիվ 1570029775597700 հաշվեհամարին 62,000,000.00 (վաթսուներկու միլիոն) ՀՀ դրամ գումարն ամբողջությամբ մուտք լինելու օրը և գործում է մինչև 30 հունիսի 2027թ. ներառյալ, որից հետո սույն Երաշխիքը համարվում է ուժը կորցրած: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրը իր իրավասու էլեկտրոնային փոստի հասցեից (tradefinance@ameriabank.am) ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված Պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին (tender4@minurban.am):

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

6.1) թիվ ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 Պայմանագրի՝ ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

6.2) Բենեֆիցիարի կողմից Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը ստանալու հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե՝

8.1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին.

8.2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Առևտրի ֆինանսավորման կենտրոնի ղեկավար՝
Սուրեն Քոչարյան

Ամերիաբանկ ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, 0010
Վ. Սարգսյան փող. 2
+374 10 56 11 11
+374 12 56 11 11
ameriabank.am
info@ameriabank.am

#bankaboutyou

tender4

From:	Trade Finance <TradeFinance@ameriabank.am>
Sent:	Tuesday, June 9, 2026 5:06 PM
To:	'tender4@minurban.am'
Cc:	Trade Finance
Subject:	ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 _ Բանկային երաշխիքների թողարկում
Attachments:	Xerox Scan_09062026153223.pdf

Հարգելի գործընկեր,
Սույնով հաստատում ենք, որ 09.06.2026թ. «ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից թողարկվել է՝

- O.AB.100.12CIB.PIED.0.18658.26 Պայմանագրի ապահովումը
- O.AB.100.12CIB.PIED.0.18659.26 Կանխավճարի ապահովումը

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի օգտին «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊԸ, «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 7» ՍՊԸ և «ԱՐԱՄԵ» ՍՊԸ ՀԳ-ի հետ կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-25/28 պայմանագրի գծով:

Երաշխիքների բնօրինակից արտատպված տարբերակները՝ կից:

Հարգանքով՝

I'm Karine Hovhannisyan
Senior Specialist, Payment instruments and escrow division, Ameriabank
+37410 56 11 11 | www.ameriabank.am | 2 V. Sargsyan Street, Yerevan, RA

#Bankaboutpeople